

ՏՕՆ՝ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ - ՉԱՏԻԿ

Ս. Յարութեան տօնը ուսումնական տարեշրջանի երկարատեւ վերջին արձակուրդն է: Կանխող լման շաբաթը եւ յաջորդող Երկուշաբթին, որ «Մեռելոց» յիշատակի օրն է, դպրոցը փակ կը մնայ:

Առաջին դարերէն սկսեալ, ոչ միայն հայ ժողովուրդին, այլեւ ամբողջ քրիստոնեայ աշխարհին համար, Ս. Յարութիւնը կամ Չատիկը նկատուած է ամենէն նշանակալից կրօնական տօնը:

Եկեղեցին, կամ քրիստոնեաներ կը հաւատան, որ Նոր կրօնին մէջ ամենէն հիմնականը՝ մարդու յաւիտենական կեանքին, կամ հոգիի անմահութեան գաղափարն է. իսկ Յարութեան տօնը՝ ա՛յդ գաղափարն է որ կը խորհրդանշէ, կենդանի օրինակ ունենալով Զրիստոսը, որ խաչելութենէն եւ թաղումէն ետք, յարութիւն առաւ:

Արձակուրդի շաբաթը կը կոչուի Աւագ Շաբաթ:

Կարեւորութեամբ նշենք, որ այդ շաբթուան օրերը՝ Յիսուսի կեանքին ամենէն նշանակալի ապրուած օրերն են եւ որ կը գրաւեն Նոր Կտակարանի չորս Աւետարաններուն բովանդակութեան աւելի քան մէկ երրորդը:

Սկսեալ Չատիկի Նախորդ Կիրակիէն, իւրաքանչիւր օրը կը խորհրդանշէ Յիսուսի կեանքէն առնուած թելադրական դրուագներ, դէպքեր եւ իրողութիւններ, որոնք ուսանելի են հաւատացեալներուն համար. անոնք՝ շարժառիթ եղած ն Նաեւ կրօնական մասնաւոր խորհուրդներու, ասանդութեանց եւ պաշտամունքներու:

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՂԹԱՎԱՆ ՍՈՒՏԸ՝ ԵՐՈՒՍԱՂԵՍ

ԱՐՄԱՒԵՆԵԱՑ ԿԻՐԱԿԻ - ԾԱՂԿԱՉԱՐԴ (PALM SUNDAY)

Ս. Յարութեան տօնէն մէկ շաբաթ առաջ՝ Նախորդող Կիրակին, քրիստոնեայ ամբողջ աշխարհին համար, տօնական խանդավառ օր է:

Այդ Կիրակին կը կոչուի Արմաւենեաց Կիրակի: Հայ ժողովուրդը այդ տօնին համար եւս ունի իւրայատուկ կոչում, Ծաղկազարդ:

Յիսուս 33 տարիներու կեանք մը ապրեցաւ: Վերջին երեք տարիները եղան քարոզչական եւ ուսուցողական հրաշալի տարիներ, բայց ընդհանրապէս փոքր քաղաքներու եւ գիւղերու մէջ: Ամենէն վերջը սակայն, Ան որոշեց, որ պետք է երթայ Նաեւ Երուսաղէմ եւ հոն եւս քարոզէ:

Դէպի Երուսաղէմ՝ Յիսուս ճամբայ ելաւ Բեթանիայէն, որ քաղաքին մօտիկ արուարձան մըն էր:

Երուսաղէմ մուտքին՝ ընդունուեցաւ այնպիսի խանդավառութեամբ, ինչպէս հին աշխարհին՝ ողիմպիականի ախոյեանները կամ պատերազմի հերոսները կ'ընդունուէին իրենց քաղաքներուն մէջ: Խուռներամ ժողովուրդը խանդավառութեամբ կը դիմաւորէր Յիսուսը արմաւենիի եւ ձիթենիի ճիւղերով:

Լայն խաւերու մէջ, արդէն տեղ գտած էր եւ կը խօսուէր Անոր կողմէ գործուած հրաշքներու մասին: Այդ պատճառով հաւանաբար, Նաեւ մեծ թիւով հիւանդներ, կոյրեր, խուլեր, հաշմանդամներ խնուած էին քաղաքի մուտքին, որպէսզի օգտուին Յիսուսի ներկայութենէն:

Դիմաւորութեան դրուագը կը դառնար պատմական:

Օրը սակայն, գրեթէ մթնած էր եւ Երուսաղէմի մէջ Յիսուսի գործունեութիւնները բնական կերպով կը յետաձգուէին, սկսելու համար Երկուշաբթի առաւօտուն:

Հանդիսաւոր եւ պատմական այս այցելութեան յիշատակումն է ահա, որ քրիստոնեական եկեղեցիներուն մէջ, պատարագիչ հայրերու գլխաւորութեամբ, դպրաց երգեցիկ խումբերու առաջնորդութեամբ, սպիտակ հագուած եւ ընտիր մոմեր վերցուցած բազմաթիւ մանուկներու եւ պատանիներու սիրայօժար մասնակցութեամբ, կը կազմուի շքեղ թափօր, որ խանդավառօրէն կը շրջի եկեղեցւոյ շրջափակին մէջ:

ԱՄԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Յիսուս Կիրակի իրիկուն վերադարձաւ Բեթանիա, ուր անցուց գիշերը:

Յաջորդ օրը՝ Երկուշաբթի, նորէն եկաւ Երուսաղէմ: Երբ հասաւ Տաճար, յուզումով տեսաւ, որ բազմութիւն մը հոն առետուրով կը զբաղի: Անընդունելի գտաւ երեւոյթը: Որոշեց լաւ դաս մը տալ ժողովուրդին:

Գաւազան մը ձեռքին՝ դուրս քշեց բոլոր վաճառականները եւ գնում ընողները. վերիվայր շրջեց լումայափոխներու սեղանները, վտարեց աղանի ծախողները եւ վերջաւորութեան, ուսուցանելու պէս ըսաւ անոնց. »Միթէ գրուած չ'է՞, որ իմ տունս ժողովուրդին համար միայն աղօթքի տուն պիտի ըլլայ. մինչդեռ դուք զայն վերածած էք աւազակներու որջի...«:

Յատկանշական այս դէպքին համար, Աւագ Երկուշաբթին կը կոչուի Տաճարի Մաքրագործման Օր: (Կարդալ Մարկ.ի Աւետ. 11. 15-19):

ԱՄԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Յիսուս կը քարոզէ Տաճարին մէջ:

Յրեայ նախանձոտ ղեկավարներ եւ կրօնականներ հաշտ աչքով չեն նայիր Անոր: Արդէն, Երկուշաբթի օրուան դէպքը՝ Տաճարի մաքրագործումը, շատերուն սրտերը լեցուցած էր թշնամական զգացումներով: Կը սկսին յետին նպատակներով հարցումներ ուղղել Յիսուսի, որպէսզի իր խօսքերուն մէջ »սխալ արտայայտութիւններ« պատճառ բռնելով՝ դիմեն պատժական օրէնքներու եւ ազատին իրմէ: (Մատթ. 21.23, 22. 6-17):

Նոյն օրը՝ Երեքշաբթի, քարոզչութեան ընթացքին, Յիսուս ժողովուրդին կու տայ կարեւոր պատգամ մը. կը պատմէ 10 Կոյսերու Առակը, որ եկեղեցական արարողութիւններու ընթացքին յաճախ կը բեմականացուի աշակերտուիներուն կողմէ: (Մատթ. 25. 1-13):

Առակը հիմնականին մէջ կոչ մըն է ամեն մարդու, որ կեանքի մէջ միշտ արթուն եւ պատրաստ ըլլայ որեւէ հաւանականութեան, կամ անակնկալի առջեւ. հաշուետուութիւն, մահ, Տիրոջ երկրորդ գալուստը, եւայլն: (Մատթ. 24. 36-39):

ԱՄԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Յիսուս Չորեքշաբթի կ'անցընէ Բեթանիա, երեւելի անձնաւորութեան մը տանը մէջ:

Այդ օրը կը յատկանշուի յայտնութեանական հետեւեալ դրուագներով եւ արտայայտութիւններով:

- Ճաշի ընթացքին, Ղազարոսի քոյրը՝ Մարիամ, շատ սուղ եւ ընտիր անուշահոտ իւղով կ'օծէ Յիսուսի գլուխը եւ կը լուայ ոտքերը: Այդ դրուագը կը նկատուի Վերջին Օծումի յայտնութեանական նշան:

- Չրոյցներու ընթացքին, Յիսուս յստակ կերպով կը նախատեսէ, որ շուտով վերջ պիտի տրուի իր կեանքին: Կը յայտնէ, որ իր աշակերտներէն մէկը պիտի դաւաճանէ իրեն եւ պիտի մատնէ թշնամիներուն ձեռքը:

Յոս յստակ կերպով կը դրսեւորուի, որ վատութիւն գործողը պիտի ըլլայ Յուդան: Միւս կողմէ, Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերու պատահարները Տաճարէն ներս, արդէն սրած էին մթնոլորտը եւ գաղտնի՝ ծրագիրներ կը մշակուէին »վտանգաւոր քարոզիչը« մէջտեղէն վերցնելու...:

Կրօնական կարգով, Աւագ Չորեքշաբթին համեմատաբար աւելի պարզ է քան նախորդող եւ յաջորդող օրերու արարողութիւնները:

ԱՄԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Աւագ Շաբթուան ընթացքին, եկեղեցւոյ մէջ ամենէն ճոխ արարողութիւնները կը կատարուին Աւագ Հինգշաբթի օրը:

Այդ օրը տեղի կ'ունենան ամենէն ժողովրդական եւ յուզիչ արարողութիւնները:

ՈՏՆԼՈՒՄՅ.-

Հինգշաբթին՝ հրեական պատեքի օրն էր. այսինքն՝ Մովսես Մարգարի առաջնորդութեամբ՝ ժողովուրդի ազատագրութեան յիշատակի տօնը Եգիպտոսի գերութենէն: Պէտք է կատարուէր ականդական տօնախմբութիւն, հաւաքական ճաշ-ընթրիքով:

Յիսուս այդ օրը Տաճար չգնաց: Երկու աշակերտներ դրկեց Երուսաղէմ, որ ընթրիքի եւ տեղի համար պատրաստութիւններ տեսնեն:

Ուշ ատեն, Յիսուս ու աշակերտները կը հասնին ճշդուած վայրը՝ Վերնատուն: Հոն՝ հակառակ ընդդիմութիւններու, Յիսուս կ'որոշէ, որ ինք պիտի լուայ իր աշակերտներուն ոտքերը: Որոշումը կը գործադրէ, Մեծութեան մէջ խոնարհութեան յուզիչ դաս մը տալով բոլորին:

Ամէն տարի բոլոր եկեղեցիներուն մէջ, դաստիարակիչ այս դրուագը կը բեմականացուի եւ արարողութեանց կը տրուի գրաւիչ բնոյթ: Ուրախալի երեւոյթ է, որ յաճախ նաեւ աշակերտներ մասնակից կը դառնան ոտնլուայի արարողութեանց:

ՎԵՐՁԻՆ ԸՆԹՐԻՔԸ.-

Ընթրիքին, մթնոլորտը կ'ըլլայ շատ տխուր: Յիսուս կը յայտնէ, որ շուտով իր կեանքին վերջ պիտի տրուի:

Յուզումնալից այդ նախատեսութեան առիթով, կը վերցնէ ականդական բաղարջ հացը, կ'օրհնէ եւ հանդիսաւորութեամբ կ'ըսէ.

- Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս:

Յետոյ, գաւաթը կը վերցնէ եւ դարձեալ օրհնութեամբ՝ կը շարունակէ.

- Բոլորդ խմեցէ՛ք ասկէ, վասն զի ասիկա իմ նոր ուխտս է արիւնովս, որ պիտի թափուի բազմութեան մեղքերուն համար: (Մատթ. 26. 26-28), (Ղուկ. 22. 19-20):

Յիսուսի յիշեալ խորհրդանշական խօսքերը կրօնաւոր հայրեր հանդիսաւոր կերպով կ'արտասանեն ամէն անգամ, երբ անոնք Սուրբ Պատարագ կը մատուցանեն:

ԿԱԼԱՆԱԻՈՐՈՒՄ.-

Վերջին ընթրիքէն ետք, Յիսուս իր աշակերտներուն հետ կը մեկնի Գեթսեմանի, որ Երուսաղէմի մօտին ձիթենիներու այգի մըն էր: Ուշ գիշեր էր արդէն, եւ՝ աղօթքի պահ՝ Յիսուսի համար: Յանկարծ կը յայտնուին հետախոյզներ: Անոնց հետ է նաեւ Յուդան: Մատնիչը իր պաշտօնը կատարելու համար կը մօտենայ Յիսուսի եւ կը համբուրէ...: Հետախոյզները անմիջապէս կը կալանաւորեն Յիսուսը եւ կը տանին հարցաքննութեան:

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

Հինգշաբթի ուշ գիշերէն մինչեւ Ուրբաթ առաւօտ, Յիսուս անընդհատ կը հարցաքննուի եւ կ'անարգուի:

Հրէից Կայիաբա քահանայապետը եւ դատաւորներ շատ խիստ վերաբերումով

Յիսուսի դատը տեսնելէ ետք, կ'որոշեն պատիժը. խաչելութեամբ՝ մահ: (Մարկ. 14. 53-65):

Բայց որովհետեւ մահապատիժի իրաւասութիւնը կը պատկանէր հռոմեացի կառավարիչին, որուն անունն էր Պիղատոս, հրեաներ Յիսուսը կը փոխանցեն անոր, որ ինք եւս հարցաքննէ եւ հաստատէ պատիժը:

Պիղատոս կը գտնէ, որ Յիսուս յանցաւոր մը չէ. եւ այդ մտածումով, ամբոխին առջեւ ելլելով, կը լուայ ձեռքերը, ըսել ուզելով, որ Ան անմեղ է: Անկանոն բազմութիւնը սակայն, անընդհատ կը պոռայ. »խաչելութիւն«, »մահ«...:

Կառավարիչ Պիղատոս, ազդուելով ամբոխի տրամադրութիւններէն, ծեծել կու տայ Յիսուսը եւ կը յանձնէ անոնց:

Այնուհետեւ, խաչը ուսին, փուշէ պսակը գլուխին, ամբոխը անարգանքներով զայն կ'ուղղէ դէպի Գողգոթա, ուր եւ կը խաչեն երկու այլ յանցագործներու հետ:

Ամէն բան վերջացած՝ տեղի կ'ունենայ նաեւ թաղումը:

Աւագ Ուրբաթը, տրուած այս պայմաններուն մէջ, կը կը նկատուի տարուան ամենէն տխուր օրը:

Արաբական աշխարհին մէջ, նաեւ իսլամներ, ամէն տեսակ աշխատանք կը դադարեցնեն (առնուազն կէսօրէ վերջը) եւ ժողովուրդը յարգանքով կը դիմաւորէ

քրիստոնեաներուն զգացումները: Այդ Ուրբաթ օրը կը կոչեն Մեծ կամ Հրաշալի Ուրբաթ: Հոս՝ ան կը կոչուի Good Friday: (Խաչելութեան եւ թաղման մանրամասնութիւնները կարդալ՝ Մարկ. 25. 16-47):

Նկատել տանք, որ Աւագ Ուրբաթ օրուան կրօնական արարողութիւնները, յարանուանական բոլոր եկեղեցիներուն մէջ, կ'ըլլան բացառիկ շուքով, յուզիչ եւ տխուր մթնոլորտի մէջ:

Ներկայ կ'ըլլան մեծ թիւով հաւատացեալներ:
Սովորութիւն է կամ ավանդութիւն, որ մարդիկ այցելեն այլ եկեղեցիներ եւս, տեսնելու համապատասխան արարողութիւնները տարբեր ժողովուրդներու մօտ:

ԱՎԱԳ ՇԱՔԱԹ ՕՐ - ԽԹՈՒՄ

Համեմատած նախորդ երկու օրերուն, Աւագ Շաբաթ օրը ունի ավելի պարզ արարողակարգ:

Երկար պահեցողութիւնները վերջ կը գտնեն երեկոյեան:

Հաւատացեալներ անհամբեր կը սպասեն հրաշալի Յարութեան ւաւետման պահը:
Կրօնական կարգով, արեւամուտէն ետք, օրը կը շրջուի եւ կը նկատուի Կիրակի:

Իրիկունը՝ ճրագալոյց է: Կը կոչուի նաեւ Խթում:

Տեղի կ'ունենայ հանդիսաւոր Ս. Պատարագ:

Ժողովուրդը կը սիրէ գիշերային այս պահն ու Ս. Պատարագը: Շատեր՝ ամբողջ ընտանիքով ներկայ կ'ըլլան եկեղեցի: Ամէն ոք հպարտութեամբ եւ հոգեկան ցնծութեամբ է, որ կ'ուզէ դպիրներու անուշ երգեցողութեամբ լսել՝

»Քրիստոս յարեաւ ի մեռելոց«:

Եկեղեցիէն դուրս՝ հաւատացեալներ գիրար կը շնորհաւորեն. Չատիկ է:

»Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի«:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԻ - ՉԱՏԻԿ

Մեծ հանդիսաւորութեամբ, կը մատուցի Ս. Պատարագը:

Տօնին կարեւորութեան եւ իմաստին մասին՝ պատարագիչ սրբազան հայրեր, վարդապետներ եւ քահանայ հայրեր կը խօսին պատշաճ քարոզներ եւ կը կատարեն մեկնաբանութիւններ:

Հուսկ՝ ժողովուրդը շարքի կը կենայ ստանալու համար Ս. Հաղորդութիւն:

* * *

Յայտնենք, թէ դպրոցական բոլոր աշակերտները, որեւէ պատճառով Ս.

Հաղորդութենէն չզրկուելու համար, արձակուրդը չսկսած՝ վերջին օրուան առաւօտուն, արդէն ստացած կ'ըլլան Չատկական Ս. Հաղորդութիւնը:

ՉԱՏԻԿԵՆ ԵՏՔ՝ «ՄԵՌԵԼՈՅ» ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբազան հայրերու տնօրինութեամբ, դարերէ ի վեր հայ հաւատացեալներ որեւէ Տաղաւարի յաջորդ օրը, Չատկուան պարագային՝ Երկուշաբթին, կը նկատեն «Մեռելոց», կամ՝ »Յիշատակի օր«:

Ամէն ընտանիք կամ անձ, լաւագոյն յիշատակներով եւ զգացումներով անգամ մը եւս կը մտածէ, կամ կ'երթայ յարգելու յաւետ բաժնուած սիրելիներու յիշատակը: